# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Տիտղոսաթերթ

| | |
|---|---|
| Կազմակերպության տվյալներ<br>● Անվանում, հասցե<br>● Տնօրեն<br>● Էլ.հասցե<br>● Հեռախոս | «ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ»<br>ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ<br>ՎԱՀՐԱՄ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ<br>masnakcayindproc@gmail.com |
| | |
| Հետազոտության թեմա/վերնագիր<br>● Հետազոտության թեմա | ԹԱՓՈՆԻ ՎԵՐԱԾՈՒՄԸ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԵԿԱՄՏԻ ՎԵՐԱԾԵԼՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԸ |
| | |
| Ուսուցչի տվյալներ<br>● Ա.Ա.Հ.<br>● Մասնագիտություն<br>● Հեռախոս<br>● Էլ. հասցե<br>● Դասավանդվող առարկաներ<br>● Դասարաններ | Մելսիդա Ստեփանի Զքչյան<br>Տեխնոլոգիայի ուսուցիչ<br><br>Տեխնոլոգիա<br><br>V-VII դասարաններ |
| Ուսումնական հաստատության տվյալներ<br>● Անվանումը, հասցե<br>● Հեռախոս<br>● Էլ. հասցե (տնօրինության)<br>● Web կայքի հասցե | ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ<br>« ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»<br>ՊՈԱԿ<br>Գյումրի-Արմավիր մայրուղի N7 |

Բովանդակություն

Տիտղոսաթերթ..... 1

Բովանդակություն..... 2

Ներածություն..... 3

Պարագրաֆներ/մասեր..... 5

Գրականության ակնարկ..... 5

Օգտագործված մեթոդները.....11

Եզրակացություններ, առաջարկություններ.....,,,,,.....,,,,,,.....13

Օգտագործված գրականության ցանկ.....,,,,,,,,.....14

Հավելված
1.....15

Առանցքային կոմպետենցիաներ

Հավելված
2.....16

Որակական հետազոտություն ֆոկուս խմբային քննարկումների միջոցով /ծնողների հետ/

Հավելված
3.....17

Որակական հետազոտություն ֆոկուս խմբային քննարկումների միջոցով /սովորողների հետ/

Ներածություն

<<Տեխնոլոգիա>> կրթական ոլորտը հանդիսանում է կրթության բաղկացուցիչ մասը, որը սովորողներին առարկայի դասընթացին զուգահեռ ուսուցանվող ինտեգրված <<Ձեռնարկատիրական գործունեություն>> թեմաների ուսումնասիմամբ զինում է սովորողներին անհրաժեշտ տեխնիկա–տեխնոլոգիական գիտելիքներով, հասկացություններով և ունակություններով, առանց որի անհնար է երկրի լիարժեք սոցիալ–տնտեսական առաջընթացը, անձի ձևավորումը, ազգային լավագույն ավանդույթների պահպանումը:

Առարկայի ուսուցման նպատակներից է սովորողի մոտ ձևավորել ձեռներեցական միտքի զարգացման կարողություններ, ինչն էլ հարմար առիթ կդառնա ստեղծագործական աշխատանքով զբաղվելովելու, ընտանեկան բյուջեն խնայելու, ինչպես նաև, հետագայում փոքրիկ եկամուտ ունենալու և ստացած եկամուտը խելացի տնօրինելու կարողունակության ձևավորման:

Այս հարցում սովորողին կօգնի տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառմամբ գտնել ինչպես թափոններից ստեղծել հետաքրքիր իրել, վերափոխել կնեցաղում անհրաժեշտ այլ իրերի, գեղեցիկ ստեղծագործական աշխատանք պատրաստել, որպես ծննդյան տարեդարձի նվեր:

Իմ հետազոտական աշխատանքի հիմնական առաքելություն է՝ սովորողներին նախապատրաստել ժամանակակից հաղորդակցման հասարակարգում ինքնուրույն աշխատանքային կյանքին, առաջացած խնդիրներին կիրթ և ողջամիտ լուծումներ գտնելու պատրաստ, ստեղծագործ, նախաձեռնող և ակտիվ անձնավորություն, ով մեծ հարգանքով կվերաբերվի և բարձր կգնահատի ձեռքի աշխատանքը: Սովորողի մոտ նաև կձևավարվի ստեղծագործական մտքի շնորհիվ, սեփական ձեռքերով, <<ավելորդ իրեր>>-ին <<նոր կյանք>> հաղորդելու գիտակցություն: Որքան հաճելի զգացողություն է թափոնից ստանալ դեկորներ, զարդեր, խաղալիքներ, որոնք կդառնան յուրօրինակ, գեղեցիկ ու հետաքրքիր նվերներ՝ թե ծննդյան տարեդարձի, թե անառիթ անակնկալ ընտանիքի անդամներին, դասընկերոջը կամ բարեկամուհուն:

| Նպատակը եւ հետազոտական հարցը | Որքանո՞վ է կարևոր ձևավորել աշակերտների մոտ թափոնները խնայողության կամ եկամտի վերածելու մշակույթը |
|---|---|
| | |
| Թեմայի կարևորությունը և նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար | Այսօրվա սովորողները քաջ տրապետում են ընտանեկան բյուջեի միջոցների բաշխմանը և |

| | |
|---|---|
| | հստակ պատկերացնում են, թե որքան դժվար է և չափազանց կարևոր այն հնարավորինս ճշգրիտ բաշխել՝ սնունդ, կոմունալ վճարումներ, հարկեր, վարկեր, ջեռուցում, միջոցառում, ուսման վճար և այլն: Ուստի շատ կարևոր խնդիր է սովորողների մոտ զարգացնել տնտեսական կոմպետենցիա, որը կնպաստի ոչ միայն ընտանեկան բյուջեի խնայողությանը, այլև կուղղորդի ապագայում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու: |
| | |
| Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը | Լրացնել միայն սովորողների մասնակցությամբ հետազոտությունների պարագայում |
| | |
| Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին | 1. Ինքնահանաչողական և սոցիալական կոմպոտենցիա<br>2. Տնտեսական կոմպոտենցիա |

## Պարագրաֆներ

| | |
|---|---|
| Գրականության ակնարկ<br>● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,<br>● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: | Կրթության գլխավոր արդյունքներից մեկը պետք է լինի անհրաժեշտ տեղեկատվությունն ինքնուրույն ձեռք բերելու, հիմնախնդիրները տեսնելու և դրանց լուծման ճանապարհները գտնելու, ստացած գիտելիքները քննադատաբար վերլուծելու և դրանք նորանոր խնդիրների լուծման համար կիրառելու կարողությունը / հավելված 1/<br>Սովորողների մոտ թափոնները խնայողության կամ եկամտի վերածելու կարողունակություններ ձևավորելու համար անհրաժեշտ են ունենալ նախնական գիտելիքներ նյութերի մասին, երևակայական, կառուցողական, ստեղծագործական մտածողություն, աշխատանքային հմտություններ, կարողություններ նյութերի հետ աշխատելու համար, |

տիրապետել աշխատանքի անվտանգության կանոնների, մշակել աշխատանքի կատարման ֆայլերի կատարման ճիշտ հաջորդականություն:

Չնայած մեր սովորողները դեռ տարրական դպրոցից ունեն թվանշանների հետ վերաբերվելու մշակույթ, այժմ թվանշանը զարդի, դրամապանակի, խաղալիքի, ծաղկամանի, գրչատուփի, հուշանվերների վերածելը կնպաստի ոչ միայն սովորողի բնապահպանական, տնտեսական, գեղագիտական դաստիարակությանը, այլև կձևավորի այնպիսի դրական հատկանիշեր ինչպիսիք են աշխատասիրություն, համբերատարություն, ժամանակի ռացիոնալ բաշխում, ստեղծագործում, ինքնակրթության անրաժեշտություն: Ընտանեկան բյուջեի իրական խնայողությունը, թեկուզ փոքրիկ եկամուտ ստանալը և այդ ստացված եկամուտը նպատակային ծախսելը սովորողի մոտ ձևավորում և զարգացնում են տնտեսական կարողունակություններ հետագայում կյանքում նախաձեռնողականություն ցուցաբերելու, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն:

Մեր հետազոտական աշխատանքի նպատակին հասնելու համար կատարել ենք նախնական աշխատանքներ՝

1. Ցոկուս ֆնանարկման հարցազրույց, ուսումնասիրել ենք սովորողների ունեցած գիտելիքների ու կարողունակությունների մակարդակը

2. Հարցաթերթիկների միջոցով ուսումնասիրել ենք ծնողների վերաբերմունքը մեր թեմայի նպատակի վերաբերյալ / հավելված 2/:

3. Հարցաթերթիկների միջոցով ուսումնասիրել ենք սովորողների վերաբերմունքը մեր թեմայի նպատակի վերաբերյալ / հավելված 3/:

Հետազոտական աշխատանքի նպատակին հասնելու համար կարելի է լիարժեք հիմք ընդունել հարցաթերթիկների պատասխանները, քանի որ դրանք անանուն էին և հետևաբար անկեղծ:

Սովորողները մեծ հնարավորություններ ունեն հսկայածավալ ինֆորմացիա, տեսադասեր վերցնելու համացանցից, ինչը ավելի կխթանի ու հետաքրքիր կդարձնի աշխատանքը:

Մեր շրջապատում ինչն է հեշտ գտնել՝ դատարկ պլաստմասե տարբեր չափերի շշեր: Շատերը կփաստեն, որ դրանք հյութ կամ ջուր պարունակող տարբաներ են, իսկ տնտեսական կարողունակություններով զինված այսօրվա սովորողը հստակ կկարողանա այդ պլաստմասե շիշը աղբամանը նետելու փոխարեն վերածել կենցաղային որևէ հարմարավետ, կրեատիվ իրի՝ ծաղկամանի, ջրամանի կամ խաղալիքի, հուշանվերի և այլն: Ստորև ներկայացնում ենք սովորողների պատրաստած յուրօրինակ առարկաները պլաստմասե շշերից. ՝

Սովորողները հետաքրքիր առարկաներ պատրաստեցին և նվիրեցին իրենք դասընկերներին մետաղյա տարբաներից.

Սովորողները հետաքրքիր իրեր պատրաստեցին կամաց-կամաց շրջանառությունից դուրս եկող լազերային սկավառակներից և աշակերտներից մեկը հին ժամացույցի միջուկը տեղադրեց շրջանակի մեջ, լազերային սկավառակներով ֆիքսեց ժամերը և ունեցավ այսպիսի արդյունք, որը նվիրեց

հորաբրոջ աղջկան՝ այսինքն ընտանեկան բյուջեից որոշակի գումար չէր առանձնացնի այդ նպատակի համար.



Սովորողները շատ հետաքրքիր տարբեր իրեր պատրաստեցին կապարիչներով, բայց միասնաբար բոլորը պատրաստեցին տաք կաթսաների տակդիրներ, որպեսզի նվիրեն մայրիկներին, շեշտելով, որ այդ նպատակի համար նախատեսված գումարը կխնայեն.

Ամենակարևորն էր, որ

- Աշակերտների մոտ առաջացավ հետագայում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու մեծ ցանկություն
- Աշակերտները որոշակի ժամանակահատված համբերությամբ կուտակեցին թափոններ այս աշխատանքները կատարելու համար

- Աշակերտները ինքնուրույն հանգեցիան եզրակացության, որ իրենց աշխատանքը օգտակար է շրջակա միջավայրը մաքուր պահելու, բարիք ստեղծելու, հաճույքով և հետաքրքրասիրությամբ աշխատելու:
- Նշված ժամանակահատվածում համբերատար աշխատեցին և ավելի ոգևորված էին, քանի որ մայրիկները շատ էին ուրախացել իրենց երեխայի ձեռքի աշխատանքը նվեր ստանալու կապակցությամբ:
- Որոշվեց տարեվերջին ցուցահանդես-վաճառք կազմակերպել համայնքում

<<Թափոնը ⇨կամուտ>>

Խորագրով:

Քանի որ մեր սովորողները այսընթացքում անընդհատ օգտվում էին համացանցից, նրանց պետք է տեղեկացնենք նաև, որ չի կարելի համացանցում տեղադրված ցանկացած lavxak - лайфхак տեսանյութերում տեսածը ի կատար ածել, քանի որ, դրանց մեծ մասը չի համապատասխանում իրականությանը, կամ կայքի օգտատիրոջը եկամուտ ապահովելու համար է արվում.

Օրինակ՝ ինչպես պատառոտված շապիկից ստանալ կարճ շրջազգեստ:

Իրականում ցուցադրվում է հին, պատառոտված, գունաթափված վերնաշապիկ, հետո մենք տեսնում ենք, թե ինչպես աղջիկը կտրում, կարում և ցուցադրում է արդյունքում ստացված <<հրաշալի, բոլորովին նոր>> շրջազգեստ: Կամ նույն սկզբունքով հին մաշված տաբատից ստանում նոր պայուսակ: Նման դեպքերում աշակերտները պետք է կարողանան տարբերեն իրականը չափազանցվածից: Իհարկե չենք բացառում, որ կան նաև շատ օգտակար, հետաքրքիր lavxak – лайфхак –ներ, որոնցից կարելի է սովորել, ձեռք բերել նորանոր կարողունակություններ.

https://www.youtube.com/watch?v=4CcgEf2uypQ

Օգտվելով հոման դասընթացից աշակերտները որոշեցին <<Տեխնոլոգիա>> գործնական աշխատանքի դասաժամին թղթի թափոններից պատրաստել տարբեր չափերի

| | |
|---|---|
| | լուսանկերների շրջանակներ, իսկ թե, ո՞րն է կատարվելիք աշխատանքների առաջին քայլը, բոլոր աշակերտները միասին պատասխանեցին.<br>– Թափոնների հավաքումը:<br>Թափոններից պատրաստված շրջանակի մեջ կտեղադրեն իրենց ամենսիրած ընտանեկան լուսանկարը ու կնվիրեն իրենց ընտանիքներին, որն էլ հենց հանդիսանում էր իմ հետազոտական աշխատանքի նպատակը: |
| | |

| | |
|---|---|
| Օգտագործված մեթոդները, գործիքները | Հարցման մեթոդ՝<br>Որակական հետազոտություն ֆոկուս խմբային քննարկումների միջոցով.<br>1. Ծնողների առանձին խմբային քննարկում՝ Հավելված 1:<br>1. Սովորողների առանձին խմբային քննարկում՝ Հավելված 2: |
| | |
| Իրականացման ժամանակահատվածը | 05.09.2022թ. - 20.09.2022թ. |
| | |
| Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/ | Ծնողներ<br>Հիմնական և ավագ դպրոցի սովորողներ |
| | |

Եզրակացություններ, առաջարկություններ

| | |
|---|---|
| Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին | Առանցքային կոմպետենցիաները համապարփակ կոմպետենցիաներ են, որոնք անհրաժեշտ են անձի զարգացման, հասարակական կյանքին ակտիվ մասնակցության, ինչպես նաև տարբեր ռեսուրսների շարունակական ողջամիջ օգտագործման համար:<br>Սովորողների մոտ ձևավորվում են վստահություն սեփական ուժերի ու կյանքի հանդեպ, հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները: Սոցիալական հարաբերություններում գործում են կառուցողական և համերաշխ, դրսևորում են ընկերակցելու ունակություն և համագործակցային հմտություններ:<br>Աշակերտները ձեռքբերեցին տնտեսական կարողունակություններ, քանի որ համարժեք վերլուծում և գնահատում են մասնավոր ձեռնարկատիրության, ժողովրդավարական տնտեսության և համաշխարհային տնտեսական մակարդակներում տեղի ունեցող տնտեսական գործընթացները: Նրանք հասկանում են հասարակության տնտեսության և բաղաքականության միջև եղած փոխազդեցությունները և արժևորում են առողջ ու անվտանգ կենսակերպը / հավելված **1**/:<br>Նրանք ընկալում են տնտեսական և հասարակական կարգերն ու ճանաչում են բնության և հասարակության փոխազդեցությունները, ինչպես նաև կայուն զարգացման ու շրջակա միջավայրի պահպանության գործում սեփական դերն ու պատասխանատվությունը: Ելնելով մեր ուսումնասիրություններից պարզեցին, որ և՛ ծնողները, և՛ սովորողները դրական են տրամադրված և պատրաստ են միմյանց օժանդակելու, թե՛ նախապատրաստական, թե՛ աշխատանքային ամբողջ գործընթացին:<br>Ուստի հանգեցնենք մի եզրակացության, սովորողի մոտ ձևավորելով ինքնահանաչողական և սոցիալական ու տնտեսական կոմպետենցիաներ կունենան բարեկիրթ, համբերատար, աշխատասեր քաղաքացի, ով ցանկացած թափոնի կնայի ստեղծագործական գիտակցությամբ, կունենա սեփական ձեռքերով պատրաստածը նվիրելու մտածելակերպ, կզբաղվի օգտակար և հաճելի աշխատանքով, կխնայի ընտանեկան բյուջեից որևէ առիթի նվերի գումար հատկացնելուց:<br>Սա կարող է նաև լուրջ հիմք ստեղծել և մասնագիտական կողմնորոշման դժվարին հարցում, հետագայում ճիշտ ընտրության կատարելուն: |

Օգտագործված գրականության ցանկ


1. Մինասյան Մ., Մինասյան Ա., Հարությունյան Ա., Համացանցի օգտագործման ուղեցույց Երևան 2009:
2. Մ. Թադևոսյան, Ս. Խաչատրյան, Վ. Սողոմոնյան, Գ. Հովհաննիսյան, Ն. Մեյրոյան, Մ . Մաթևոսյան, Բուրֆիարդ Շմիտ, Դորեն Մոդել «Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում» 2022թ.
3. Ասատրյան Ս.Մ., Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ապագա մասնագետի մասնագիտական պատրաստության գործընթացի կազմա-կերպման մի քանի մոտեցումներ, Վանաձոր, <<Մխիթար Գոշ>> թիվ 1, 2009թ.
4. Աստվածատրյան Մ.Գ., Թերզյան Գ.Հ…, 2004, էջ 24-26:
5. Teaching methods overview, https://fctl.ucf.edu/teaching-resources/teaching-strategies/teaching-methods-overview/, 08/07/2022
6. https://style.news.am/arm/news/15759/den-netelu-pokharen-inchpes-plastmase-shsheric-dizayni-paraganer-stanal.html. 08/07/2022
7. https://www.youtube.com/watch?v=4CcgEf2uypQ 08/07/2022

Հավելված **1**

Ցանկացած կրթական համակարգ պետք է համախմբի կրթական գործընթացի բոլոր մասնակիցների (ուսուցիչներ, ծնողներ, աշակերտներ), ներուժը և ստեղծի նրանց միջև արդյունավետ համագործակցություն ինչպես դպրոցի, համայնքի, այնպես էլ՝ ազգային մակարդակով:
Կոմպետենտությունը գիտելիքների և արժեքների հմուտ կիրառումն է սեփական գործունեության մեջ:
Կոմպետենտությունը գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ինտեգրված հավաքածու է, որոնք միավորվում են որոշակի համատեքստում որոշակի խնդիրներ լուծելու համար:

1. Մ. Թադևոսյան, Ս. Խաչատրյան, Վ. Սողոմոնյան, Գ. Հովհաննիսյան, Ն. Մելքոյան, Մ . Մաթևոսյան, Բուրֆհարդ Շմիտ, Դորեն Մոդել «Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում» 2022թ.

Հավելված 2
Հարցաթերթիկ /ծնողներ/

*Որքա՞ն համախ եք ունենում խնդիր*
**Ի՞նչ ելիրեկ կամ որքա՞ն գումար տրամադրեկ ծննդյան տարեդարձին նվեր գնելուն**

melsidachtchyan1952@gmail.com (без совместного доступа) Сменить аккаунт

Ըստ Ձեզ՝ տարվա կտրվածքով քանի անգամ եք բախվում վերը նշված խնդրի հետ

I

Мой ответ

Ըստ Ձեզ՝ տարվա կտրվածքով մոտավորապես որքա՞ն գումար եք ծախսում նվերներ գնելուն

I

Мой ответ

Համա՞խ եք կատարում չնախատեսված նվերների գնումներ

I

Мой ответ

Բա՞ռնր եք գնահատում և արժանորում, երբ Ձեզ ձեռքի աշխատանք են նվիրում

Мой ответ

Ինչպե՞ս եք վերաբերվում, երբ Ձեր երեխան որոշել է դասընկերոջ ծննդյան տարեդարձին ընտանեկան բյուջեից գումար տրամադրելու փոխարեն նվիրել իր ձեռքով պատրաստած գրչատուփը:

Мой ответ

Խնդրում ենք նշել Ձեր առաջարկությունները

I

Мой ответ

Отправить

Очистить форму

Հավելված 3
Հարցաթերթիկ թեստ /լրացնում են սովորողները/

**Տոնի կամ ծննդյան տարեդարձի առիթով նախընտրում եք**

- *Դպրոցում սնվելու գումարից խնայել նվեր գնելու համար*
- *Գումար կխնդրեմ մայրիկից*
- *Կհրաժարվեմ նպատակիցս ու գանձանակի գումարը կօգտագործեմ*
- *Իմ ձեռքի աշխատանքը կնվիրեմ*

**Ձեռքի աշխատանքը, որ պետք է նվիրես**

- *Հաճույքով եմ պատրաստում*
- *Պարտադրված եմ պատրաստում*
- *Վատ եմ զգում, որ գումարով չեմ կարողանում նվեր գնել*
- *Երբեք չեմ նվիրի*

**Ի՞նչ ես զգում, երբ ձեռքի աշխատանք ես նվեր ստանում**

- *Շատ հաճելի է*
- *Ուրախանում եմ*
- *Տխրում եմ*
- *Բարձր եմ գնահատում*